Ղափուլեցի Խաչատուր Նալբանդեան		20
,, Զախօյ Աղէկեան . .	1	
,, Ենովք Մանուկեան . .		40
,, Մինաս Ղազարեան . .		50
,, Սահակ Յովհաննէսեան Գասպարեանց . . .	1	
,, Մանուկ Թորոսեան . .	1	
,, Խօջայ Յունանեան . .		20
,, Յարութիւն Վարդանեան .		50
,, Գրիգոր Սարգիսեան . .		40
,, Մնացական Յովհաննիսեան .		40
,, Եղիազար Սարգիսեան . .		20
,, Յարոյ Յովհաննէսեան. .		50
,, Պետրոս Սարգիսեան . .		50
,, Նազարէթ Աղանեան . .		20
,, Մհսի. Սարգսի կինը . .	1	
,, Տիրացու Սիմոն Աբրահամեան		20
,, Աբգարենց Նազօն . .	1	
,, Մուքելի կին Մանին . .	1	
,, Երամի մայրն . . .		40
,, Դարբնի հարսն . . .		20
,, Մօսէն . . .		20
,, Խօջի մայրն . . .		40
,, Նալբանտենց Յակոբի կինն .		20
,, Զախօյի կինը և հարսը .		40
,, Նալբանտենց Խաչատրի կինը.		20
,, Ժամկոչ Աղէի կինը . .		20
,, Սիմոն Մարգարեանի կինը .		50
,, Սարգիս քէհի մայրն . .		20
,, Թորոսենց Սարգսի կինը .		40
,, Գինոսի կին Շօղոն . .		20
,, Եղիազարի կինը . .		40
,, Թորոսենց Եղսանը . .		40
,, Բարսեղի կինը . .		40
,, Տիրացու Բարսեղի մայրն .		40
,, Գասպարենց Սահակի մայրն .		20
,, Մելքոնենց Գրիգորի մայրն .		20
,, Տիրացու Երամի հարս Եաղութը		40
,, Բարուչու Պառաւն . .		20
,, Տէր Խաչատուրի երեցկինը .	1	
,, Շիլինօղլու Սառանը . .		50
,, Սարգսի հարս Թագուհին	1	
Ղափուլեցի Գրիգոր քահանայ Դաւթեան	1	
,, Աղան Նազարեթեան . .	1	

(Շարունակելի)

ՆՈՒԷՐ Պ. ՋԱՆՈՒՄԵԱՆՑԻ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Մոսկուայի Հայազն վաճառական Սարգիս Գալըստեան Պարոն Ջանումեանց իւր հարազատ եղբօր ձեռամբ՝ Աստրախանայ Հայազգի վաճառական Ստեփաննոսի Գալստեան Պարոն Ջանումեանցի՝ առաջարկեց Հոգաբարձութեան Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց մի հարիւր յիսուն րուբլի գումար յօգուտ Օրիորդական Դպրոցի, դրամք հնգետասան տնանկաց առաքելոց յանուն Բարեկար երկսեռ Անդամոց, Հոգաբարձութիւնս տեսանելով իւր համազգի անդամոց այսօրինակ ազգասիրական և ուսումնասիրական բուռն եռանդը և չկամելով գրուանի տակը թողնել այսպիսի նուիրագործութիւնքը, որով նպաստումն աղքատ մանուկ սերնդոց բարոյական և մտաւոր զարգացման, ի ցոյց իւր գոհունակութեանը՝ խնդրում է խոնարհաբար Խմբագրութենէդ, տեղ տալ այս յօդուածին Արարատ ամսագրոյ էջերի մէջ ի խրախոյս Պարոն Ջանումեանց և ի յընդհանուր գիտութիւն բարենախանձ համազգեաց.

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց
Սիմէօն Պօպօվեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սարգիս Բուրջալեանց
Գրիգոր Սողոմոնեանց

Համար 24.
12 Մարտի 1874 ամի.
Աստրախան:

Պ ՄԱՍՈՒՄԵԱՆՑԻ ՆՈՒԷՐ

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Աստրախանայ մերազնեայ Յովհաննէս Հայրապետեան Պարոն Մասումեանց ներկայ ամսոյ 10ին

իւր յայտարարութեան հետը առաջարկեց Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր դպրոցաց Հոգաբարձութեան Օրիորդական Հոգևոր Դպրոցի անուամբ մի հարիւր րուբլի. յայտնելով՝ թէ ցանկանում է նա Օրիորդական Դպրոցի մէջը ունենալ Սան (Թոշակակիր) մի աղքատ աշակերտուհի, ընտրութիւնը որոյ կախված լինի քանի կենդանի է իւր կամքէն, իսկ մահից յետոյ իւր ժառանգաց իրաւունքէն, և խնդրեց որ այն 100 րուբլին իբրև անմերձենալի գումար տալ կամ՝ Թագաւորական և կամ՝ քաղաքային Հասարակական դրամատունն աճելոյ տոկոսեօք, և որոյ շահը համարել միայն տուրք ուսման յիշեալ աշակերտուհւոյ. Հոգաբարձութիւնը դպրոցաց մեծաւ յարգանօք ընդունելով Պարոնէն այն գումարը կարգադրեց արժանը և տուաւ Աստրախանայ քաղաքային հասարակական դրամատունն եօթն ամ ժամանակաւ աճելոյ 7⁰\₀ տոկոսեօք. համաձայն ցանկութեան նուիրատուին տոկոսը կգործադրէ Պարոն Մասումեանցի Սան աշակերտուհւոյ ուսման համար. Այլ որովհետև յիշեալ Մասումեանցը շարժած ազգասիրական և ուսումնասիրական բուռն եռանդէն, ցոյց տուեց իւր համակրութիւնը ազգային բազմակարօտ դպրոցին յօգուտ մտաւոր և բարոյական զարգացման աղքատ աշակերտուհեաց. վասն որոյ Հոգաբարձութիւնս սուրբ պարտաւորութիւն է համարում ի նշան իւր գոհունակութեան խնդրել Խմբագրութենէդ հրատարակել այս յօդուածը Արարատ ամսագրոյ էջերի մէջ ի նախատես Պարոն Մասումեանցի և ընդհանուր գիտութիւն համազգայնոց.

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց
Սիմէոն Պօպովեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սարգիս Բուրջալեանց
Գրիգոր Սողոմոնեանց

Թ. 25
Ի 12 Մարտի, 1874 ամի
Աստրախան:

Պ. ՅԱԿՈԲ Հ. ԿՐԱՆԻԼՇՉԻԿԵԱՆՑԻ ՆՈՒԷՐ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Աստրախանցի Յակոբ Հայրապետեան Կրանիլշչիկեանց իւր յայտարարութեան հետը ի 26 Յունվարի տարւոյս առաջի անելով Հոգաբարձութեան Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց 300 րուբլի արծաթ դրամ՝ խնդրեց Հոգաբարձական Խորհրդարանի վարկման պէս ձգել այն դրամը Թագաւորական կամ քաղաքային հասարակական մի դրամատուն աճելոյ տոկոսեօք իբրև անմերձենալի գումար, և նորա շահիւք յանմոռ յիշատակ հոգւոյ իւր Յովհաննէս որդւոյ՝ որ վախճանել է ի ցաւ իւր ծնողական սրտին երիտասարդ հասակում, Ծխական Հոգևոր Դպրոցների մէջ ունենալ մի սան (Թոշակակիր), ընտրելով այն հայազգի աղքատ ժողովրդոց արու զաւակաց մէջէն, և կրթելով այն մանուկը մտաւորապէս և բարոյապէս անուանել նորան „Սան Յովհաննու Յակոբ Կրանիլշչիկեանց„. Հոգաբարձութիւնը մեծաւ յարգանօք ընդունելով Պարոն Կրանիլշչիկեանցէ այն գումարը՝ ձգեց քաղաքային հասարակական Դրամատուն, և Պարոնի խնդրոյ պէս ընտրեց մի աղքատ աշակերտ, որը յիշեալ դրամագլխոյ տոկոսիքով Դպրոցաց ծոցում ուսանում է Հայկական և Ռուսաց լեզու, և այն ամենայն առարկաները ուսմանց՝ որոնք սահմանած են Դպրոցաց մէջ աւանդել, և անուանեց այն աշակերտը „Սան Յովհաննու Յակոբեան Կրանիլշչիկեանց„. Այլ որովհետև յիշեալ Պարոնի այսօրինակ նուիրագործութիւնը հոյսումէ ոչ միայն ի յիշատակ ամենասիրելի որդւոյն Յովհաննու, այլ ի կրթութիւն համազգի աղքատ զաւակաց, նա մանաւանդ յիշեալ ուսումնասէր Յակոբ Կրանիլշչիկեանցը ունի մի այսպիսի սան և Ղզլարայ Ծխական Հոգևոր Դպրոցի մէջ, որոյ Հոգաբարձութեան ևս առաջարկել է 200 րուբլի մի օրինակ պայմանաւ, վասն որոյ Հոգաբարձութիւնը Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց խնդրում է Խմբագրութենէդ, միջոցաւ Արարատ ամսագրոյ

հրատարակել յունգհանուր տեղեկութիւն և ի իրախոյս ուսումնասեր Հայոց, որոնք հետևելով բարի օրինակին Պարոն Կրանիլշիկեանցի, փութան իւրեանց անջինջ սէրը դէպ իրենց զաւակունքը կամ մերձաւորքը՝ այս եղանակաւ ցուցանել, որով և կարող են անմահ պահել նոցա յիշատակը իւրաքանչիւր անձի մտաց ու սրտի մէջ դարուց ի դարս,

Հոգաբարձու՝

Յովսէփ Աւագ քահանայ Բունիաթեանց,
Յ. Սարգսեանց
Սիմէոն Պողովեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Սարգիս Բուրլալեանց

Թ. 17.

18 Փետրվարի 1874 տարի
ՅԱՌԱՐԿԱՆ.

Այս գրութիւնը մեծաւ ուրախութեամբ հրատարակելէ զկնի՝ Խմբագրութիւնս սիրելի պարտք կզգայ գովելով Պ. Յակոբը Կրանիլշիկեանցի բարի և աղգօգուտ առաքինութիւնը և նպատակը ի յիշատակ հանգուցեալ սիրելի որդւոյն իւրոյ Յովհաննու՝ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել նմին, միանգամայն կրաղձայ՝ որ այլոց բարի օրինակ լինի։

—Ապրի՞ն Ասարխանցիք։

Ի ՀԱՄԱԽՈՍ.

Խմբագրութեան Երբրաց ամառգրոյ.

Համխուց օրիորդական վարժարանի Հոգաբարձուքս ուղարկելով խմբագրութեանդ 1873 թուականում յիշեալ վարժարանի համար եղած մուտքի և ծախքի հաշուեցուցակը, ընկերութեանս Անդամց, Խնամակալուհեաց, ուսուցչաց, ուսանողուհեաց, նուիրատուաց և ուսանելի առարկայից ցուցակի հետ միասին, խոնարհաբար խնդրումենք Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակել ի գիտութիւն Ազգայնոց, այս ասիթով մատուցանելով մեր ի սրտէ գոհունակութիւնը թէ խնամակալուհեաց և թէ պատուելի նուիրատուաց։

Հոգաբարձու՝

Պօղոս Ներսէսեանց
Զաւան Տէր Ստեփանեանց
Յովհաննէս Խալաբեանց

25 մարտի 1874 տարի
Շամախի։

1873 թուականի Յունվարի 1 ին վարժարանի մայր գումար մնացել է 746 23

Մուտք՝

Քսան և ինն անդամների տարեկան տուրք, իւրաքանչիւրը 10 բուբլի 1)։	310	
Քսան և չորս խնամակալուհեաց տարեկան տուրք, իւրաքանչիւրը 5 բուբլի 2)։	140	
Զանազան անձերից ստացած նուիրագրամք։	29	75
Աշակերտուհիներից ստացած թոշակագրամք	119	60
Վարժարանի գումարի տոկոսագրամք։	123	45
Աշակերտուհեաց ձեռագործների վաճառատաղից գոյացած օգուտ։	44	
Համխեցի Պ. Սամուէլ Բաղրեանցից ստացած անտիտոխ անդամութեան միանուագ տուրք	100	
Համխեցի Յովհաննէս Խալաբեանցից ստացած անտիտոխ անդամութեան միանուագ տուրք 3)։	100	
Համխեցի Խաչատուր բէկ Եղիազարեանցից ստացած անտիտոխ անդամութեան տուրք։	100	

(1) Այս գումարի մէջ մտած են և երկու անդամների 72 թուականից մնացած ապառիկները։

(2) Այս գումարի մէջ մտած են և չորս խնամակալուհեաց 72 թուականից մնացած ապառիկները։

(3) Անտիտոխ անդամ համարվումեն թէ նոքա, որոնք միանուագ վճարումեն հարիւր բուբլի. և թէ նոքա, որոնք նոյն գումարը լրացնում են երեք տարուայ ընթացքում։